
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Շ. 3. ՊԱՐՈՆՅԱՆ

Խոսքի գործադրման հայեցակետի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն անդրադարձական բնույթ ունի, քանի որ ստեղծվում և գործադրվում է հակազդական հեռանկարով՝ համապատասխան գործողության, արձագանքի ակնկալիքով: Խոսքային գործունեությունը երկկողմանի գործընթաց է ոչ միայն այն առումով, որ ենթադրում է հաղորդակցման երկու կողմերի (խոսողի և խոսակցի, խոսողի և լսողի, գրողի և հեռանկարային ընթերցողի) առկայություն, այլ նաև այն առումով, որ այն երկմիասնական գործողությունների՝ խոսքի արտաբերման (խոսքաստեղծման) և մեկնաբանման (ընկալման) միակցություն է:

Անշուշտ, խոսքային գործունեության վերոնշյալ համադիր կողմերը հիմնվում են խոսողի և լսողի (գրողի և ընթերցողի) լեզվական կարողության՝ խոսողության պահանջներին համապատասխան լեզվական միավորների հարմարակից ընտրություն կատարելու, ինչպես նաև կիրառված խոսքային միավորները ճիշտ մեկնաբանելու ունակության վրա: Այստեղ, իհարկե, կարևորում ենք խոսողին, խոսակցին և նրանց համատեղ խոսքը՝ դիսկուրսը, ոչ թե մեկուսաբար, այլ որպես տվյալ համատեքստին համապատասխան երկմիասնական ամբողջություն դիտելու հանգամանքը: Մեր այս դրույթին միանգամայն համահունչ է Մալինովսկու հետևյալ միտքը. «Գրավոր կամ բանավոր խոսքում բառը առանց լեզվական համատեքստի սոսկ երևակայության արգասիք է, հնարավոր բան և ինքնին ոչինչ չի նշանակում»¹: Համապատասխանաբար կարող ենք նշել, որ դիսկուրսի նվազագույն միավորը՝ ասույթը, խոսքային իրադրության համատեքստից դուրս հաղորդակցական իմաստ չի արտահայտում:

Դիսկուրսի տեսության մեջ, որի հաղորդակցական միավորը ոչ թե առանձին ասույթն է, այլ ամբողջական դիսկուրսը (կամ տեքստը), լեզվագործաբանները զբաղվում են ինչպես տեքստաստեղծման, այնպես էլ խոսքի ընկալման, մեկնաբանության խնդիրներով: Ելնելով այն դրույթից, որ խոսքային գործունեությունը երկկողմանի գործընթաց է, որն ընթանում է ասույթների հաջորդական շղթայմամբ, անգլերեն խոսքի գործադրման առանձնահատկությունները վեր հանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է քննել կապակցված խոսքի հաղորդակցական կաղապարը, որից հետո միայն հնարավոր կլինի բացահայտել անգլերեն դիսկուրսին բնորոշ երկխոսական միավորները:

¹ B. Malinovski, The Problem of Meaning in Primitive Languages // The Meaning of Meaning: A Study of the Influence of Language upon Thought and the Science of Symbolism. Ogden C.K., Richards I.A., New York, 1989, p. 307.

Խոսքի գործադրումը որպես ամբողջական գործընթաց ուսումնասիրելու հայեցական պահանջին համապատասխան՝ լեզվաբանության մեջ ծագեց հաղորդակցական իրադրության համատեքստը մոդելավորող կադապար ստեղծելու անհրաժեշտությունը: Սույն կադապարը մշակվել է տարբեր դպրոցների կողմից և անցել զարգացման մի քանի փուլ, որոնցից երկուսը, թերևս, արժե քննարկել:

Հաղորդակցական լեզվաբանության մեջ, որտեղ ընդունված է հաղորդակցման գործընթացի «խոսող-լսող» բանաձևը, հաղորդակցական կադապարն ընդգրկում է հետևյալ տարրերը՝ խոսող, լսող (կամ խոսքի հասցեատեր), հաղորդակցական իրադրություն, ասույթ: Լեզվաբանական այս ուղղության կարևոր գիտական ձեռքբերումն այն է, որ հաղորդակցական իրադրության մեջ ընդգրկված են ոչ միայն լեզվական, այլ նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմք ունեցող մի շարք արտալեզվական գործոններ²:

Հետագայում՝ գործաբանական լեզվաբանության զարգացմանը զուգահեռ, այս կադապարը գաղափարական փոփոխություն կրեց: Խոսքը սկսեցին դիտել որպես երկկողմանի գործընթաց, որը կազմված է երկու զրուցակիցների հաջորդական ասույթներից, ուստի լեզվաբանների վերաբերմունքը խոսքային գործունեության նկատմամբ փոխվեց: Ըստ այդմ, հաղորդակցման գործընթացը մոդելավորող «խոսող-լսող» բանաձևին փոխարինեց «հասցեագրող-հասցեատեր» բանաձևը, որում հաղորդակցման երկու մասնակիցներն էլ կարևորվում են: Սակայն պետք է խոստովանել, որ վերոհիշյալ բանաձևը նույնպես անթերի չէր, քանի որ հասցեագրողի և հասցեատիրոջ կարգը խոսքակերպերին հավասարազոր մասնակիցների լիազորություն տալու փոխարեն կախյալ հիմքի վրա է դնում ընդմիջարկումների փոխհարաբերությունը. արձագանք-ընդմիջարկումը կառուցվածքային-իմաստային և գործառական (ֆունկցիոնալ) առումով կախված է ազդակ-ընդմիջարկումից: Դիսկուրսի վերլուծության շրջանակներում կատարված հետագա ուսումնասիրություններում, որոնք առնչվում են խոսքային ակտի իլլոկուտիվ և փոխներգործական մակարդակներին, խոսքակերպերի ընդմիջարկումների միջև այնպիսի փոխհարաբերություններ բացահայտվեցին, որոնք ապահովում են ազդակի և արձագանքի իրավահավասարությունը: Այս ձեռքբերումներին համահունչ՝ հաղորդակցման գործընթացը մոդելավորող «խոսող - խոսակից» բանաձևից երևում է, որ դիսկուրսը խոսքային փոխներգործություն է, որի ընթացքում երկու զրուցակիցներն էլ ակտիվորեն մասնակցում են հաղորդակցական նպատակի իրագործմանը: Այս բանաձևում, ինչպես տեսնում ենք, շեշտված է երկրորդ մասնակցի խոսքային ակտիվությունը. նա այլևս պասիվ «լսող» կամ խոսքի «հասցեատեր» չէ, այլ զրուցակից, որը պատասխանում է խոսողին, արձագանքում է նրա ասածին:

Խոսողի և խոսակցի (կամ խոսքակերպ) հաղորդակցական հակադրումը երկախոսության երկու հավասարազոր մասնակիցների դերը ուսումնասիրելու խնդիրն առաջ բերեց: Այս ուղղությամբ կատարվող լեզվաբանական հետազոտությունները հիմնվում են սոցիալական հոգեբանության և

² См. В. Д. Девкин, Диалог. Немецкая разговорная речь в сопоставлении с русской. М., 1981:

հոգելեզվաբանության վրա, որտեղ խոսող անձը դիտվում է որպես հասարակական անհատ: Խոսքային գործունեության խնդիրներով զբաղվող հոգեբանները հաղորդակցման գործընթացը դիտում են փոխներգործության տեսանկյունից, այսինքն՝ որպես փոխադարձ գործողությունների շարք³: Այստեղ ընդունվում է «S1+S2» (սուբյեկտ1+սուբյեկտ2) բանաձևը, որում երկու խոսող անձ է ընդգրկված: Միևնույն ժամանակ, սույն բանաձևը չի առաջարկում հաղորդակցությունը դիտել որպես տեղեկատվության պարզ փոխանցում, որպես «օղակաձև փակ շրջագիծ», քանի որ «տեղեկությունը ոչ միայն հաղորդվում, այլ նաև ձևավորվում, զարգանում, ճշգրտվում է»⁴: Այսպիսով, «S1+S2» բանաձևի հիմնաբարն այն է, որ նրանում հաղորդակցության գործընթացը մեկնաբանվում է որպես տեղեկության ակտիվ փոխանակում, որպես խոսող անհատների համատեղ գործողություն, որը հանգեցնում է որոշակի արդյունքի⁵:

Սակայն, երբ տեքստը ընդունվեց որպես խոսքային միավոր, իսկ տեքստաստեղծումը՝ խոսքային գործունեության ձև, լեզվաբանության մեջ տարածում գտավ «գործաբանական իրադրություն» գիտաբառը, որն ընդգրկում է տեքստաստեղծման գործունեության օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետևյալ ամբողջությունը՝ սուբյեկտ, խոսքի հասցեատեր, այս երկուսի փոխհարաբերությունները, հաղորդակցման նպատակ և բովանդակություն, գրողի անհատական հոգեկան որակները, նրա հաղորդակցական կարողությունը, զանազան արտալեզվական հանգամանքներ⁶: Ինչպես տեսնում ենք, խոսքաստեղծման այս հաղորդակցական կադապարը վերաբերում է ոչ թե բանավոր, այլ գրավոր խոսքին:

Հաղորդակցական կադապարի զարգացման գործաբանական փուլում թերևս կարևոր է նշել մեկ հանգամանք: Քանի որ գործաբանական լեզվաբանությունը «մարդակենտրոն» հայեցակերպ ունի, և խոսողության ժամանակ ելակետային է դառնում խոսող անձը՝ իր անհատական, հասարակական հատկանիշներով, լեզվական կարողություններով հանդերձ, ապա խոսքը նկերները դիտվում են ոչ թե հաղորդակցական իրադրությունից դուրս, դրանից զատ, այլ դրա ներսում, որպես հաղորդակցական կադապարի բաղկացուցիչ տարր: Հաղորդակցական իրադրության համատեքստի առավել ամբողջական պատկերը տեսնում ենք Ֆերսխուերենի⁷ ներքոբերյալ գծապատկերում:

Հետաքրքիր է նշել նաև, թե գործաբանական լեզվաբանության մեջ ինչպես է զարգացել հաղորդակցական կադապարի ամենակարևոր բաղադրիչներից մեկի՝ ասույթի գաղափարը: Հաղորդակցական լեզվաբանության մեջ ասույթը դիտում էին կիրառման տեսանկյունից՝ որպես իմաստային ամբողջություն, որն անվանում է (номинирует) տվյալ իրադրությունը:

³ Տե՛ս **Н. Н. Обозов**, Межличностные отношения, М., 1979:

⁴ **Б. Ф. Ломов**, Общение и проблема общей психологии // Методологические проблемы социальной психологии. М., 1975, с. 131.


⁵ Տե՛ս **Г. М. Андреева**, Социальная психология, М., 1980, էջ 101:

⁶ Տե՛ս **Н. Д. Арутюнова** և др., Человеческий фактор в языке: Коммуникация, модальность, дейксис, М., 1992:

⁷ Տե՛ս **J. Verschueren**, Understanding Pragmatics. New York, 1999, էջ 76:

Գործաբանական լեզվաբանության զարգացմամբ խոսքի հաղորդակցական միավորը վերահաստատվել է և ընդլայնվել՝ ընդգրկելով ոչ միայն ներլեզվական (լոկուտիվ), այլ նաև արտալեզվական (իլլոկուտիվ, պերլուկուտիվ) իմաստային տարրեր: Ընդամենը, հաղորդակցական իրադրության կադապարն է՝ ավելի ընդլայնվելով՝ ընդգրկելով այնպիսի արտալեզվական տարրեր, ինչպիսիք են խոսողների դիտավորությունը, մտադրությունը և նրանց կրած խոսքային ազդեցությունը:

Գծապատկեր



Ճանաչողական լեզվաբանության, ինչպես նաև փոխներգործության տեսության խնդիրներին առնչվող մեր հետազոտությունների հիման վրա համոզվում ենք, որ առկա կադապարն ունի «դատարկ ճեղքեր» - գիտելիքի տարածքներ, որոնք նույնպես կարևոր են հաղորդակցման ժամանակ: Դրանք վերաբերում են խոսքի բնույթին՝ որպես հասարակական գործունեություն, և գիտելիքի գիտակցական կամ ենթագիտակցական արտածման իմացական գործընթացներին: Ահա թե ինչու, մեր կարծիքով, անհրաժեշտություն կա հաղորդակցական իրադրության գործաբանական կադապարում ավելացնել նաև երկու կարևոր բաղադրամաս՝ խոսքի հանրությանի տարրը և հիշողությունը:

Հաղորդակցման գործընթացի մեր կադապարը, այսպիսով, ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝ խոսողներին, հենքային գիտելիք, հաղորդակցական իրադրության եղանակ և ձև, հաղորդակցման նվազագույն միավոր, հիշողություն:

Խոսքնկերներ: Քանի որ խոսքը աստղության երկկողմանի գործընթաց է, հաղորդակցման մասնակիցները երկուսն են՝ խոսողը/գրողը, որը միտք է հաղորդում՝ կատարելով համապատասխան լեզվական միավորների ընտրություն, և խոսակիցը/ընթերցողը, որը լսում, կարդում և մեկնաբանում է իրեն հասցեագրված խոսքը՝ դրան արձագանքելու/մեկնաբանելու միտումով:

Գործաբանական լեզվաբանության մեջ խոսքնկերները՝ արտաբերողն ու մեկնաբանողը, դիտվում են նախ և առաջ անձի ցուցայնության դիրքերից՝ ըստ հաղորդակցական գործընթացի ուղղորդվածությունն արտահայտող լեզվական կարգի, որը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ հաղորդակցական դերերը՝ խոսող (առաջին դեմք, միջանձնյա հաղորդակցման դեֆիկտիկ կենտրոն), խոսքի հասցեատեր (երկրորդ դեմք, անձ/անձինք, որին/որոնց ուղղված է խոսքը), այլք (երրորդ դեմք, անձ/անձինք, ով/ովքեր հանգամանքների բերումով ներկա են գրույցին, կամ ում մասին հիշատակվում է):

Հաղորդակցման մասնակիցներ են համարվում վերոնշյալ դերակատարներից առաջին երկուսը: Ջրույցի ընթացքում տեղի է ունենում խոսողի և մեկնաբանողի դերերի մշտական փոփոխություն: Խոսողը դառնում է մեկնաբանող, իսկ վերջինս էլ ստանձնում է հերթական խոսողի դերը: Իրականում խոսելու գործընթացը ուղեկցվում է այս երկու հաղորդակցական դերերի հերթագայությամբ: Ըստ որում, խոսող է դառնում ոչ միայն նախորդ խոսքի անմիջական հասցեատերը՝ լսողը, այլ նաև «կողմնակի մասնակիցը»՝ երրորդ դեմքի հասցեատերը, որը, մոտիկ գտնվելով, լսել և մեկնաբանել է ասվածը:

Հենքային գիտելիք (background knowledge): Սա իրականության մասին գրուցակիցների ունեցած համատեղ հենքային գիտելիքի պաշարն է, որը նրանց թույլ է տալիս հաղորդակցվել՝ կրճատելով երկուստեք ակնհայտ և ավելորդ գիտելիքը:

Խոսողներների համատեղ հենքային գիտելիքը, ինչպես պատկերված է Ֆերսխուտերենի վերը բերված գծապատկերում, ներառում է նրանց մտավոր և ֆիզիկական աշխարհը, ինչպես նաև հասարակական միջավայրը: Անհրաժեշտության դեպքում ակտիվանալով նրանց գլխում՝ այս գիտելիքը ապահովում է արտաբերվող խոսքային միջոցների ճիշտ ընտրություն կամ լսածի ճիշտ մեկնաբանություն:

Մտավոր աշխարհին վերաբերող հենքային գիտելիքը պարունակում է ինչպես իմացական, այնպես էլ զգացական տարրեր: Այն կապվում է անձի հոգեբանության՝ գրուցակիցների հոգեկան կերտվածքի, նրանց հույզերի, սպասումների, համոզմունքների, մտադրությունների, դիրքորոշումների հետ և այլն: Հաղորդակցական գործընթացի այս վերաբերականները այն նախադրյալներն են, որոնք հուզական երանգ են հաղորդում խոսքին, զգացմունքային և տրամաբանական ներգործություն են կատարում լսողի վրա, ինչպես նաև ապահովում վերջինիս՝ խոսքը լսելու և մեկնաբանելու շահագրգռվածությունը: Մտավոր աշխարհին վերաբերող հենքային գիտելիքը պարունակում է նաև անձի տեսական իմացողության (օբյեկտիվ աշխարհի ճանաչողության) պաշարը, որը յուրահատուկ սցենարների ձևով ամբարված է նրա գիտակցության մեջ և անհրաժեշտության դեպքում օգտագործվում է:

Ֆիզիկական աշխարհի՝ խոսողներին շրջապատող շրջակա միջավայրի մասին հենքային գիտելիքը ընդգրկում է խոսքային իրադրության ժամանակին և տեղին վերաբերող անվանումները, որոնք, ինչպես հայտնի է, բացարձակ արժեք չունեն լեզվում: Ինչպես գիտենք, ցանկացած հաղորդակցական իրադրություն տեղ է գտնում որոշակի ժամանակի և տարածության մեջ: Շրջակա միջավայրը տարածության, ժամանակի և հանգամանքների մի ամբողջություն է, որում տեղի է ունենում տվյալ խոսքային իրադրությունը: Շրջակա միջավայրին վերաբերող գիտելիքը կողավորվում և ապակողավորվում է ժամանակի ու տեղի ցուցայնության միջոցով՝ ապահովելով խոսքի կապը արտաքին աշխարհի հետ. now/then; in/on; come/go; here/there; this/that; north/east; left/right և այլն:

Հասարակական միջավայրին վերաբերող հենքային գիտելիքը դրսևորվում է անձի ցուցայնության հետ առնչվող դերանունների միջոցով: Այստեղ խոսքային գործունեության համար էական առաջնային հատկա-

նիշներ են գրուցակիցների սեռը, տարիքը, նրանց հասարակական դիրքը: Այն գիտելիքը, որ վերաբերում է հասարակական կառուցվածքի տարրերին, պայմանավորված է հասարակական միջավայրով և ազդում է ոչ միայն ցուցայնական բառերի՝ դերանունների ընտրության վրա, այլև խոսելաոճի և բովանդակության վրա:

Այսպես, տարբեր հասարակական միջավայրերում գտնվելիս (դպրոց, ընտանիք, ընկերական միջավայր) խոսողը իր խոսելաոճը հարմարեցնում է տվյալ միջավայրին՝ ընտրելով համապատասխան խոսքային միջոցներ: Այս կամ այն հաստատության մեջ գտնվելիս (դատարան, եկեղեցի, հիմնարկություն) խոսողը կիրառում է տվյալ միջավայրին համապատասխան բառեր, երբեմն նաև, ինչու ոչ, գիտաբառեր՝ առօրյա, նկարագրական բառերի փոխարեն:

Հասարակական միջավայրով պայմանավորված՝ բառերի ընտրությունը կապված է նաև խոսողի և լսողի (կամ լսողների) հասարակական դիրքով, փոխհարաբերությամբ: Այսպես, հասարակայնորեն անբազրված դիրքը խոսողներից մեկին թույլ է տալիս հրամայել, հեզմել, կշտամբել, բարձր խոսել, անպատվել, իսկ մյուսից պահանջում է խնդրել, աղաչել, ցածր խոսել, քծնել և այլն:

Մրանք, անշուշտ, վերաբերում են տվյալ լեզվական հանրությանը բնորոշ հաղորդակցական նորմերին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել: Նմանապես, հաղորդակցական նորմերի համակարգի մեջ են ընդգրկված նաև խոսքի լեզվամշակութային տարրերը, որոնք ազգային, կրթական մակարդակի, սեռային, կրոնական տարբերությունների պատճառ են դառնում:

Հաղորդակցական իրադրության եղանակ (channel) և ձև: Հաղորդակցման եղանակով է պայմանավորված, թե մարդիկ ինչպես են շփվում միմյանց հետ: Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ այսօր հնարավոր է դարձել հաղորդակցվել ոչ միայն դեմառդեմ, այլ նաև հեռախոսի, հեռախոսային հաղորդագրությունների, էլեկտրոնային փոստի, ցանցային տեսախցիկի (webcam) կամ չեթի՝ թվացյալ իրականության պայմաններում հաղորդակցմամբ:

Հաղորդակցման ձևը նրա խոսքային կամ ոչ խոսքային բնույթն է: Խոսքային հաղորդակցությունը, ի տարբերություն նշանների լեզվի, ունի կենսաբանորեն մեզ տրված մեկ լեզվական միջոց՝ խոսքային հնչյունները: Դրանք արտաբերվում են հաղորդակցման ոչ խոսքային միջոցներին զուգահեռ: Դրանց թվին են պատկանում հարալեզուն՝ դիմախոսողը, ինչպես նաև ձեռքի ու մարմնի շարժումները: Խոսքային գործունեությունը սովորաբար ընթանում է հաղորդակցական տարբեր ձևերի՝ խոսքային և ոչ խոսքային միջոցների զուգակցմամբ:

Հաղորդակցման նվազագույն միավորն իր իմաստային կառուցվածքով: Քանի որ խոսողությունը մտքերի, ըստ որում՝ ավարտուն և ինքնավար մտքերի փոխանակման գործընթաց է, հաղորդակցական կադապարի կարևոր բաղադրիչներից է կառուցվածքային և իմաստային միասնությամբ օժտված խոսքի նվազագույն միավորը, որն ունի հետևյալ դրսևորումները.

ա) ավարտուն մտածական գործողություն և կառուցվածքային ամբողջություն, որը կազմվում է ըստ տվյալ լեզվում գոյություն ունեցող կանոնների և բնորոշվում է իրեն հատուկ ձևաբերականական, իմաստային և հնչե-

րանգային հատկանիշներով (նախադասություն),

բ) ավարտուն հաղորդակցական գործողություն և իմաստային ամբողջություն, որի կիրառությունը խոսքի տվյալ հատվածում ունի որոշակի հաղորդակցական նպատակ (ասույթ),

գ) ավարտուն խոսքային գործողություն, որն ունի կիրառական իմաստ, այսինքն՝ արտահայտում է խոսողի մտադրությունը (խոսքային ակտ):

Ինչպես տեսնում ենք, խոսքը միևնույն շարահյուսական միավորի մասին է (նախադասություն-ասույթ-խոսքային ակտ), որը յուրաքանչյուր դեպքում մտածական գործողության մի կողմն է անվանում (կառուցվածքային-իմաստային կառույց, կիրառման իրադրային նպատակ, իրադրային դիտավորություն):

Ինչպես գիտենք, գործաբանական լեզվաբանությունը ասույթը դիտում է որպես լոկուտիվ, իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակների եռատարր ամբողջություն: Լոկուտիվ մակարդակում արտացոլվում է ստորոգման բովանդակությունը՝ ասույթի նշանակությունը: Ասույթի երկրորդ (իլլոկուտիվ) և երրորդ (պերլոկուտիվ) մակարդակները հայտնագործել են գործաբաններ Օսթինը և Սըրլը: Իլլոկուտիվ մակարդակում դրսևորվում է խոսքի հաղորդակցական իմաստը, խոսողի մտադրությունը՝ հրաման, խնդրանք, հարցում: Պերլոկուտիվ մակարդակում դրսևորվում է այն ազդեցությունը, որը տվյալ խոսքային իրողությունը առաջացնում է լսողի վրա (ահաբեկում, համոզում, զվարճացում):

Այսպիսով, խոսքային ակտերի տեսության մեջ ընդունված է այն տեսակետը, որ խոսքային գործունեության ընթացքում խոսողը ոչ միայն ավարտուն միտք է արտահայտում, որը բառիմաստի և ստորոգման արդյունք է, այլ նաև լսողին է հաղորդում որոշակի մտադրություն: Հետևաբար, խոսքը ճիշտ ընկալելու համար բավական չէ հասկանալ միայն տվյալ ասույթի բառացի բովանդակությունը: Հաղորդակցման բնականոն ընթացքի համար շատ ավելի կարևոր է հասկանալ տվյալ ասույթի իլլոկուտիվ իմաստը, որի շնորհիվ խոսքում կիրառված ասույթը «վերափոխվում» է խոսքային ակտի. խոսքային գործողություն է կատարում*:

Անցյալ դարի 80-ական թվականներին դիսկուրսի վերլուծության տեսության շրջանակներում ստեղծվեց մի նոր ուղղություն՝ փոխներգործության տեսությունը, որի հիմնավորումը գտնում ենք Էդմոնդսոնի հայտնի «Spoken Discourse» գրքում: Ընդլայնելով գործաբանական հետազոտությունների ոլորտը և գերազանցելով մեկ առանձին ասույթի սահմանը՝ Էդմոնդսոնը նախ և առաջ մերժում է խոսքային ակտերի տեսության մեջ ընդունված այն տեսակետը, որ հնարավոր է որոշել առանձին, համատեքստից դուրս գտնվող խոսքային իրողության իլլոկուտիվ իմաստը: Նա կարծում է, որ խոսքային իրողության իրականացումը երկու գրուցակիցների համատեղ գործունեության արդյունք է, և, հետևաբար, խոսքային իրողության իլլոկուտիվ իմաստը մեծապես պայմանավորված է ասույթների հաջորդականության մեջ նրա տեղով և տեղին լինելու հանգամանքով (relevance).

* Տե՛ս **J. L. Austin**, How to Do Things with Words.- Cambridge (Mass.) 1962, Searle J.R. Speech Acts: An Essay in the Philosophy of Language.- Cambridge, 1979:

«միայն հաջորդող ասույթի շնորհիվ է նախորդի իլլուկուտիվ իմաստը դառնում որոշակի»⁹:

Փոխներգործության տեսության գլխավոր նորույթը խոսքային ակտի ևս մեկ մակարդակի՝ փոխներգործականի բացահայտումն է: Ելնելով գրուցակիցների համատեղ հաղորդակցման սկզբունքից՝ Էդմոնդսոնը ասույթները դիտում է որպես հանրային գործողության իմաստավորում ունեցող փոխներգործական մակարդակի տարրեր: Փոխներգործական մակարդակը ասույթի իմաստային շերտերից մեկն է, որի շնորհիվ խոսքային իրողությունը հասարակության մեջ կատարում է մարդկանց հարաբերություններին հատուկ խոսքային գործողություններ՝ հրաժարություն, համաձայնություն, դրդում, տեղեկատվության հայցում, քննադատություն և այլն: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, փոխներգործության տեսության շնորհիվ խոսքային իրողության իմաստային կառուցվածքը է՛լ ավելի է ընդլայնվում՝ ընդգրկելով ևս մեկ արտալեզվական տարր՝ միջհաղորդակցական մակարդակ, որը պայմանավորված է մարդու հանրության գործունեությամբ, ենթարկվում է հասարակության մեջ ընդունված հանրային նորմերին, և որի միջոցով իրականացվում է իրար հաջորդող ընդմիջարկումների փոխհամաձայնեցված հարակցումը:

Քանի որ վերջին շրջանում ընդունված է խոսքն ուսումնասիրել հասարակական համատեքստում, այն է՝ որպես մարդու հասարակական էությունից բխող ճանաչողական գործողություն, անհրաժեշտություն է ծագում ուսումնասիրելու խոսքի հանրական գործառույթը: Այդ պատճառով մենք առաջարկում ենք հաղորդակցման լեզվագործաբանական կադապարի մեջ ընդգրկել նաև խոսքի հանրության տարրը, ասույթի միջոցով իրականացվող փոխներգործական ակտը՝ որպես խոսքի հանրական գործառույթի դրսևորում:

Հիշողություն: Ճանաչողական լեզվաբանության մեջ լեզուն համարվում է ճանաչողական գործընթաց, որն արտաձում է մարդու «ներքին միտքը»¹⁰, նրա գլխում՝ հիշողության «ներքին լեքսիկոնում»¹¹, գտնվող գիտելիքը: Ըստ Բերեզինի՝ լեզուն մտային, ճանաչողական, ներքին գիտելիքի արտահայտումն է: Խոսող անհատն ունի գիտակցության՝ շրջակա միջավայրին վերաբերող ձեռքբերովի գիտելիքի կառույց և ներքին լեքսիկոն, որտեղ կենտրոնացած է լեզվի մասին նրա գիտելիքը: Ճանաչողական գիտակցության ոլորտը, որտեղ «գրանցված» գիտելիքը հիմնականում պատկերային բնույթ ունի և լեզվական գիտակցության ոլորտը, որտեղ «պահվում են» բառերը, դրանց իմաստներն ու լեզվական կառույցները, ուղեղին բնորոշ գործունեք են, որոնք համագործակցում են լեզվամտածողական գործունեության ընթացքում: Ինչպես կարելի է ենթադրել, այս համագործակցությունը հնարավոր է դառնում գիտակցության բարձրագույն որակի՝ հիշողության շնորհիվ և հիշողության միջոցով, մի յուրահատուկ գիտակցական նյութի,

⁹ W. Edmondson, Spoken Discourse: A Model for Analysis.- London, N.Y., 1981, p. 26.

¹⁰ В. Б. Касевич, Языковые структуры и когнитивная деятельность // Язык и когнитивная деятельность., Москва, 1989, p. 8-19.

¹¹ Տե՛ս Փ. Մ. Березин (Отв. ред.), Язык и структуры представления знаний., М., 1992.

որը տվյալ դեպքում և՛ «պահեստարան» է¹², և՛ ուղեղի տարբեր կառույցներն իրար կապող մեխանիզմ¹³: Ահա թե ինչու ճանաչողագիտության և, մասնավորապես, ճանաչողական լեզվաբանության մեջ կարևորվում է հիշողության գործոնը՝ որպես լեզվամտածողական գործընթացի կարևորագույն օպերատիվ միջոց: Ակներև է, որ լեզվամտածողության համար կարևոր են ինչպես հիշողության որակական հատկանիշերը (իմաստային, գիտելիքային, բառային, տեքստային, իրադրային՝ էպիզոդային, պատկերային), այնպես էլ դրա տեսակները (կարճատև, երկարատև, ակնթարթային, օպերատիվ):

Պետք է ասել, որ ճանաչողական լեզվաբանության մեջ հիշողության գործոնին հինականում անդրադառնում են հասկացման գործընթացի ճանաչողական մեխանիզմների քննության ժամանակ: Վան Դեյկի և Քինչի մշակած հասկացման իմաստային կաղապարում կարևոր դեր են խաղում հիշողության բնախոսահոգեբանական որակները (բառացի հիշողություն, որն ունի սահմանափակ հնարավորություններ, և իմաստային հիշողություն, որն ունի լայն հնարավորություններ, քանի որ նրանում պահպանվում է կարդացածի ընդհանուր միտքը, իմաստը)¹⁴: Իսկ ահա արդեն իրադրային կաղապարում¹⁵ կարևորվում է էպիզոդիկ՝ իրավիճակային հիշողությունը, որի միջոցով կարդացողը վերհիշում է այն անձանց, իրադարձությունները, գործողությունները, որոնց մասին խոսվել է:

Կարևոր ենք համարում նշել, որ հաղորդակցման իրադրային կաղապարը ներառում է նաև ընթերցողի/խոսողի նախկին հաղորդակցական փորձը, ինչը դարձյալ կապվում է հիշողության պահեստարանների հետ:

Անդրադառնալով խոսքի ճանաչողության խնդիրներին՝ Ֆերսխուերենը լեզվի կիրառման՝ խոսողության ընթացքում կատարվող մտավոր աշխատանքը անվանում է ընկալում և ներկայացում, պլանավորում և հիշողություն: Խոսքային գործունեության մեջ նա մեծ դեր է հատկացնում հիշողությանը և այն դիտում ոչ թե սոսկ լեզվական վարքի ռետրոսպեկտիվ (հետադարձ) ներկայացում կամ տեղեկության մշակումը սահմանափակող գործոն, այլ որպես լեզվի կիրառման միջոց, աղբյուր, որը կա՛մ ճանաչման դեր է կատարում (recognition - հիշողության ինքնաբեր կենտրոնացում, որն անհրաժեշտ է տվյալ դիսկուրսը հասկանալու համար), կա՛մ էլ մտաբերման (recall - որևէ բան հիշողությունից ետ բերելու գիտակցական ճիգ): Առօրյա

¹² Տե՛ս **T. A. ван Дейк, В. Кинч**, Стратегии понимания связного текста // Новое в зарубежной лингвистике, вып. 23. М., 1988, էջ 153-212:

¹³ Տե՛ս **Е. С. Кубрякова, А. М. Шахнарович, Л. В. Сахарный**, Человеческий фактор в языке: Язык и порождение речи. М., 1991, **J. Verschueren**, նշվ. աշխ.:

¹⁴ Կուզենայինք նշել, որ գիտելիքային հիշողության մեջ «ամբարված» գիտելիքը ներառում է նաև լեզվին և հասարակական նորմերին, ինչպես նաև խոսքի արարողակարգին վերաբերող մետալեզվական տեղեկություն: Տեքստային հիշողությունը երկարատև հիշողությանն է առնչվում և կախված է անձի գիտելիքների մակարդակից: Այսպես, ընդունված դրույթ է, որ որքան զարգացած է անձի գիտելիքի բազան, այնքան նրա տեքստային հիշողությունը լավ է (տե՛ս **T. A. van Dijk, W. Kintch**, Cognitive psychology and discourse: recalling and summarizing stories // Current Trends in Text Linguistics., Berlin, N.Y., 1978):

¹⁵ Տե՛ս **T. A. ван Дейк, В. Кинч**, նշվ. աշխ.:

հաղորդակցությունը մեծապես հենվում է ճանաչման՝ հիշողության պահեստարաններում գտնվող գծապատկերների, սցենարների իմացության վրա: Սակայն այն, ինչ խոսվում է անցյալի մասին, պահանջում է ակտիվ մտաբերում¹⁶:

Այն հանգամանքը, որ հիշողությունը մեկնաբանող, բացատրող գործառույթ ունի, կարևոր մեթոդաբանական դեր է կատարում խոսքի ուսումնասիրության համար: Մի կողմից՝ խոսքի կիրառման բոլոր մանրամասները կարելի է ուսումնասիրել ձայնագրությունների միջոցով, մյուս կողմից՝ ժապավենի վրա ձայնագրվածը բավարար չէ այն լիակատար մեկնաբանելու համար. այն, ինչ ասվում է տվյալ պահին, ընդգրկված է ավելի ընդարձակ խոսքային համատեքստում և կախում ունի հիշողության հետադարձ (ռետրոսպեկտիվ) արտացոլումներից, որոնք ժամանակային առումով անջատված են ձայնագրված առկա խոսքային «հյուսվածքից»: Սա կարևոր հանգամանք է, քանի որ պարզ է դառնում, որ խոսքի վերլուծության ժամանակ արտալեզվական գործոնների մեկնաբանությունը պայմանավորված է հիշողության գործառույթով: Իսկ մենք գիտենք, թե ինչ կարևոր դերակատարում ունեն արտալեզվական գործոնները խոսքում:

Այսպիսով, վերլուծելով հիշողության դերը ճանաչողության՝ լեզվամտածողության մեջ, մենք եզրակացնում ենք, որ հաղորդակցական կադապարի լեզվագործաբանական ճանաչողական պատկերում անհրաժեշտ է ընդգրկել նաև հիշողությունը՝ որպես լեզվական և գիտակցական կառույցները կապող կամուրջ:

Պ. Ա. ПАРОНИЯ — *Когнитивно-прагмалингвистическая интерпретация коммуникативной модели английской речи.* — В данной статье дается описание коммуникативной модели английской диалогической речи, основанное на прагмалингвистическом когнитивном подходе. В качестве составляющих коммуникативной модели рассматриваются следующие языковые и неязыковые компоненты: говорящие, высказывание, фоновые знания, средство и канал коммуникации, память.

¹⁶ Տե՛ս J. Verschueren, նշվ. աշխ., էջ 173: